ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԳՈՐԾԱԴԻՐ ՏՆՕՐԵՆԻ ՈՒՂԵՐՁԸ 4
ՀՈԳԱԲԱՐՁՈՒՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀԻ ՈՒՂԵՐՁԸ 5
ՁԵՌՔԲԵՐՈՒՄՆԵՐԸ՝ ԹՎԵՐՈՎ 7

ԳԼՈՒԽ 1. ԿԱՌՈՒՑԵԼ ՏՆԵՐ, ՀԱՄԱՅՆՔՆԵՐ ԵՎ ՍԵՐՄԱՆԵԼ ՀՈՒՅՍ 8
Բնակարանային միկրոֆինանսավորում 9
Մետաֆինանսավորում 10
Բնակարանային ոլորտում աջակից ծառայություններ 11
Աղետների ռիսկի նվազեցում և արձագանքում 12
Փոխելով ընտանիքի կյանքը 13
ԳԼՈՒԽ 2. ԿԱՄԱՎՈՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԸ ՀՖՀ ԱՐՄԵՆԻԱՅԻ ՀԵՏ 15
Գլոբալ վիլիջ 15
Կամավորների պատմություններ 15
Մեկօրյա շինարարություն 18
Փոխելով ընտանիքի կյանքը 19
ԳԼՈՒԽ 3. ՀԵՏԵՎՈՂԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ
ԳԼՈԲԱԼ ՊԱՀԱՆՋՆԵՐԻՆ 21
Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն 22
Զուտ ակտիվների փոփոխության մասին հաշվետվություն 23
2013 ֆինանսական տարվա միջոցների օգտագործում 24
2013 ֆինանսական տարվա միջոցների աղբյուրները 24
ԳԼՈՒԽ 4. ՆՎԻՐԱՏՈՒՆԵՐԻ ՄԵԾԱՀՈԳՈՒԹՅՈՒՆԸ 25
ՀՖՀ ԱՐՄԵՆԻԱՅԻ ՀՈԳԱԲԱՐՁՈՒՆԵՐԻ ԽՈՐՀՈՒՐԴ ԵՎ
ՀՖՀ ԱՐՄԵՆԻԱՅԻ ԱՆՁՆԱԿԱԶՄ 27
ԶԱՐԳԱՑՈՂ ԴԻՆԱՄԻԿԱՆ 28
Հավելված 1 29

ՀԻՇԱՐԺԱՆ ՏԱՐԻ

Սիրով ողջունում և ցանկանում եմ ընթերցողին ներկայացնել ՀՖՀ Արմենիա հիմնադրամի 2013 ֆինանսական տարվա հաշվետվությունը:

2013թ. ՀՖՀ Արմենիայի համար հաջողություններով լի տարի էր: Հաշվետվությունն ընթերցելով՝ կտեղեկանաք, որ 2013 ֆինանսական տարում մենք օժանդակել ենք 1,413 ընտանիքների, որը 46%-ով գերազանցում է ծրագրվածին:

Միջազգային կամավորների չորս խումբ միացել է մեզ օժանդակելու և սատարելու չորս հայ ընտանիքների բնակարանային պայմանները բարելավելու գործում: Տեղական կամավորական ծրագիրը նույնպես հաջողությամբ է անցել. նշված ծրագրի շրջանակներում մեզ էր միացել Կոկա-Կոլա Հելլենիկ Բոթլինգ Քամփնի Արմենիա ընկերությունը, որի աշխատակիցները երկօրյա շինարարական միջոցառման ընթացքում օժանդակեցին մեր գործընկեր ընտանիքին վերանորոգել իրենց բնակարանը: Մենք հպարտ ենք նաև, որ հրատարակվել են բնակարանային պայմանների բարելավման աշխատանքների տեխնիկական օժանդակության ուղեցույցները, որոնք պարունակում են Հայաստանի բնակարանների շինարարությանն ու վերանորոգմանն առնչվող ամենահաճախ հանդիպող խնդիրների լուծման վերաբերյալ խորհուրդներ: Ավելին, որպես Աղետների կառավարման թիմի անդամ՝ ՀՖՀ Արմենիան լուրջ դերակատարում կարող է ունենալ Աղետների ռիսկի նվազեցման և արձագանքման ազգային պլատֆորմի հետագա զարգացման գործում: Եվ վերջապես, մենք հպարտանում ենք նոր ձեռք բերված համագործակցություններով և ծրագրերով, ինչպիսին է, օրինակ՝ Բազմաբնակարան շենքերի էներգաարդյունավետության բարձրացման ծրագիրը՝ ուղղված ցածր եկամուտ ունեցող տնային տնտեսություններին, որն իրականացվում է ԱՄՆ ՄԶԳ-ի և ՀՖՀ Ինթերնեյշնլի հետ համատեղ: Այս ծրագիրը հույս է ներշնչում, որ տեսանելի ապագայում համատեղ փորձառության և գործողությունների միջոցով էական ներդրում կունենանք էներգետիկայի շուկայում:

Բնակարանային խնդիրները Հայաստանում բազմազան են և համապարփակ: Մեր առաքելությունն է վերացնել Հայաստանում անբավարար բնակարանային պայմանները: Դրա համար անհրաժեշտ է շատ ավելին, քան սոսկ շինարարությունը: Անհրաժեշտ է հաստատել նոր համագործակցություններ, ընդգրկել ավելի մեծ թվով կամավորներ, ներգրավել համախոհների, մոբիլիզացնել ավելի մեծ ծավալով ֆոնդեր և զարգացնել ու իրականացնել նոր և նորարարական ծրագրեր: Հաշվի առնելով վերոնշյալը՝ լիահույս ենք հաջորդ տարվա հանդեպ և շարունակում ենք հավատալ, որ հաջողություններ կունենանք մեր ձեռնարկումներում:

Ես և ՀՖՀ Արմենիայի աշխատակազմս ուրախ ենք, որ ավելի քան 1,400 հայ ընտանիքներ այս տարի արդեն իսկ ապրում են բարելավված կացարաններում, և նրանց երեխաները ավելի առողջ լինելու հնարավորություն ունեն ու ապրում են առավել հարմարավետ պայմաններում: Իհարկե, դեռևս մեծ աշխատանք ունենք կատարելու, և մենք, որպես բնակարանային ոլորտի առաջատար կազմակերպություն, հաստատակամ ենք, որ մեր աշխատանքով կնպաստենք, որ յուրաքանչյուր հայ ընտանիք ունենա ապահով, մատչելի և պատշաճ կացարան, որը կոչվում է տուն:

Շնորհակալությունս եմ հայտնում մեր գործընկերներին, կամավորներին, նվիրատուներին, Հաբիթաթի առաքելության հետևորդներին, գործընկեր ընտանիքներին և աշխատակազմին:

Լուիզա Վարդանյան
ՀՖՀ Արմենիայի գործադիր տնօրեն

ՃԱՆԱՊԱՐՀ, ՈՐԸ ՊԵՏՔ Է ԱՆՑՆԵԼ

Երբ ՀՖՀ Արմենիան վերսկսեց իր աշխատանքները 2008 թ., մենք օժանդակեցինք 67 գործընկեր ընտանիքների բարելավելու իրենց բնակարանային պայմանները: Այժմ՝ չորս տարի անց, մեզ համար իսկական տոն է ծառայել ավելի քան 1,400 ընտանիքների լոկ մեկ տարվա ընթացքում: Նման աճը հնարավոր չէր լինի ապահովել առանց նվիրված աշխատակազմի, նոր գաղափարների, նոր գործընկերների, նոր մոտեցումների և հետևողական նվիրված աշխատանքի՝ ուղղված առավելագույն արդյունքներ ապահովելուն: Մեր աշխատանքի ծավալը պետք է աճի բնակարանային անբավարար պայմաններ ունեցող մարդկանց ավելացող թվին զուգահեռ, եթե ցանկանում ենք կյանքի կոչել անհրաժեշտ փոփոխությունը. Հայաստանում այս խնդրի առումով մեր տեսլականը ավելի հաստատուն դեռևս չէր եղել:

Իհարկե, այս առաջընթացը ձեռք է բերվել նոր մոտեցումների արդյունքում, սակայն ապագայի տեսլականն ավելի հեշտ իրագործելի է, երբ գիտես, թե որտեղից ես գալիս, ինչ է եղել մինչ քեզ, ինչպես նաև այն պարագայում, երբ կարողանում ես կառուցել՝ հիմվելով այն ամուր հիմքի վրա, որը դրվել է նախկինում: Այս կազմակերպությունը տարեցտարի ավելի մեծ ներդրում է ունենում Հայաստանի անբավարար բնակարանային պայմանների բարելավման ոլորտում՝ շնորհիվ իր հաստատուն արժեքների և անձնակազմի, որը նվիրված է կազմակերպության նպատակներին և երկիրը զարգացնելու առաքելությանը:

Հատկապես կցանկանայի առանձնացնել և գնահատանքի խոսք ուղղել իմ պաշտոնի նախկին հանձնառու և կազմակերպության հիմնադիր Դոն Հասչինին: Նրա տեսլականն ու առաջնորդումը յուրովի ավանդ են ունեցել կազմակերպության հաջող գործունեության հարցում: Կցանկանայի հավաստիացնել, որ հենց այդ համոզմունքով ու վճռականությամբ է, որ մենք կշարունակենք զարգանալ և Հայաստանում ավելի մեծ թվով մարդկանց կենսակերպը բարելավել:

Վերագնահատելով անցյալն ու մտորելով ապագայի մեծ ձեռքբերումների մասին՝ ես կցանկանայի երախտագիտությունս հայտնել բոլոր նրանց, ովքեր մեր աշխատանքի մասն են կազմել՝ լինի դա անցյալում, թե ներկայում: Մենք հավատում ենք մի աշխարհի, ուր յուրաքանչյուր ոք ունի արժանապատիվ կացարան: Ուստի թևակոխում ենք վաղվա օրը այդ հավատով և ահա գալիս ծառայելու:

Գրեգ Ֆոսթեր
ՀՖՀ Արմենիայի Հոգաբարձուների խորհրդի նախագահ
Հաբիթաթ ֆոր Հյումենիթի Ինթերնեյշնլ կազմակերպության Եվրոպայի, Մերձավոր Արևելքի և Աֆրիկայի տարածաշրջանային գրասենյակի փոխնախագահ

ՀՖՀ Արմենիան 2013 ֆինանսական տարում աջակցել է 1,413 ընտանիքների:
2000 թ. մեկնարկից ի վեր մենք օժանդակել ենք 2,728 ընտանիքների: Հաշվի առնելով, որ միջին ընտանիքը բաղկացած է չորս անձից՝ նրանց թիվը կազմում է ավելի քան 10,900 մարդ, որոնց բնակարանային պայմանները բարելավվել են ՀՖՀ Արմենիայի աշխատանքի շնորհիվ:

ՁԵՌՔԲԵՐՈՒՄՆԵՐԸ՝ ԹՎԵՐՈՎ

1,350 Գործընկեր ընտանիքների թիվը, որոնց ծառայություն է մատուցվել ՀՖՀ Արմենիայի և միկրոֆինանսական հաստատությունների (ՄՖՀ) («Կամուրջ» ՈՒՎԿ ՓԲԸ և «Նոր Հորիզոն ՈՒՎԿ ՍՊԸ) միջև համագործակցության արդյունքում:

150 Մարդկանց թիվը, որոնց տրամադրվել են բնակարանային պայմանների բարելավման աջակից ծառայություններ (ֆինանսական միջոցների կառավարման ուսուցում և շինարարության տեխնիկական խորհրդատվություն):

67 Մարդկանց թիվը, ովքեր որպես կամավոր միացել են ՀՖՀ Արմենիայի աշխատանքներին Գլոբալ վիլիջ և Մեկօրյա շինարարություն կամավորական ծրագրերի շրջանակներում:

63 Ընտանիքների թիվը, որոնք ապրում են համատիրության կողմից կառավարվող վերանորոգված բազմաբնակարան շենքերում: Այդ աշխատանքները իրականացվել են ՀՖՀ Արմենիայի, «Ինեկոբանկ» ՓԲԸ-ի և Վանաձորի քաղաքապետարանի համատեղ ջանքերով:

37 Անհատ նվիրատուների թիվը, որոնք աջակցել են ՀՖՀ Արմենիային:

13 ԱՄՆ-ում և Կանադայում Հաբիթաթի մասնաճյուղերի թիվը, որոնք նվիրատվություն են կատարել ՀՖՀ Արմենիայի ծրագրերին աջակցելու համար: Արդյունքում օժանդակություն է տրամադրվել 57 հայաստանաբնակ ընտանիքների:

5 Ծրագրերի թիվը, որոնք իրականացրել է ՀՖՀ Արմենիան. Բազմաբնակարան շենքերի վերանորոգում, Հույս կանանց կողմից ղեկավարվող ընտանիքներին, Բնակարանային միկրոֆինանսավորում, Բնակարանի վերանորոգման միկրոֆինանսավորում ցածր եկամուտ ունեցող ընտանիքների համար, Բազմաբնակարան շենքերի էներգաարդյունավետության բարձրացման ծրագիր՝ ուղղված ցածր եկամուտ ունեցող տնային տնտեսություններին:

ԳԼՈՒԽ 1

ԿԱՌՈՒՑԵԼ ՏՆԵՐ, ՀԱՄԱՅՆՔՆԵՐ ԵՎ ՍԵՐՄԱՆԵԼ ՀՈՒՅՍ

ՀՖՀ Արմենիայի աշխատանքի սկզբունքները, ուղղությունները, ծրագրերը և հիմական ձեռքբերումները 2013 ֆինանսական տարում: 2014 ֆինանսական տարվա ծրագրերը:

ՀՖՀ Արմենիան Հաբիթաթ ֆոր Հյումենիթի Ինթերնեյշնլի (ՀՖՀԻ) ազգային գրասենյակն է Հայաստանում: ՀՖՀ Արմենիայի տեսլականը, առաքելությունը, սկզբունքները և ռազմավարությունը համահունչ են ՀՖՀԻ-ին:
2000 թ. սկսած ՀՖՀ Արմենիայի գործունեության հայեցակարգի հիմքաքարն է եղել համագործակցային համատեղ ուժերով բնակարանային պայմանների բարելավման միջոցառումներ իրականացնելը: Անհատ նվիրատուները, ֆինանսական հաստատությունները, կորպորացիաները, կամավորները, համայնքներն ու պատշաճ կացարանի կարիք ունեցող մարդիկ դառնում են գործընկեր իրենց համայնքներում մատչելի բնակարանային լուծումներ ստեղծելու գործում: Բնակարանը սեփական ուժերով կառուցելու մոդելի կիրառման դեպքում գործընկեր ընտանիքները, որպես ներդրում, հարյուրավոր աշխատանքային ժամեր տրամադրելով՝ մասնակցում են իրենց տան կառուցմանը: Նրանց կողմից իրականացվող մատչելի վարկերի գծով մարումները ուղղվում են Վերականգնող ֆոնդ այլ ընտանիքներին ձեռք մեկնելու նպատակով:
ՀՖՀ Արմենիան գործունեություն է ծավալում Հայաստանի բոլոր մարզերում և նոր ռազմավարության համաձայն՝ ներդրում է ունենում համայնքային, ոլորտի զարգացման և հանրային մակարդակներում:

Ծրագրերի ազդեցությունը համայնքային մակարդակում

Համայնքի ներգրավվածությունն ապահովելու համար ՀՖՀ Արմենիան ընտանիքներին մատուցում է բնակարանային ոլորտում աջակից ծառայություններ (ԲՈԱԾ)՝ ուղղված խոցելի խմբերի համար լուծումներ գտնելուն և աղետների ռիսկի նվազեցմանը և արձագանքմանը (ԱՌՆԱ):

Ծրագրերի ազդեցությունը ոլորտի զարգացման մակարդակում

Առավելագույն ազդեցության հասնելու համար ՀՖՀ Արմենիան օժանդակում և ընդլայնում է իր համագործակցությունը տեղական կազմակերպությունների, տեղական ինքնակառավարման մարմինների, համատիրությունների, միկրոֆինանսական և ֆինանսական հաստատությունների հետ, ինչպես նաև խթանում է վերոնշյալ կողմերի միջև համագործակցությունը:
ՀՖՀ Արմենիան խթանում է շուկայական այն մոտեցումները, որոնք նպաստում են մատչելի բնակարանային լուծումների համար նախատեսված տարբեր վարկային պրոդուկտների և ֆինանսավորման տրամադրմանը:

Ծրագրերի ազդեցությունը հանրային մակարդակում

ՀՖՀ Արմենիան առաջնային դեր է խաղում բնակարանային պայմանների խնդիրների մասին իրազեկության բարձրացման գործում՝ որպես աղքատության հաղթահարման հիմքաքար: ՀՖՀ Արմենիան Գլոբալ վիլիջ և Մեկօրյա շինարարություն ծրագրերի միջոցով իր աշխատանքներում ներգրավում է կամավորների, որոնք էլ հետագայում իրազեկում են բնակարանային խնդիրների մասին:

2013 ֆինանսական տարում ՀՖՀ Արմենիան գործունեություն է ծավալել հետևյալ ուղղություններով՝
1) Բնակարանային միկրոֆինանսավորում,
2) Մետաֆինանսավորում բազմաբնակարան շենքերի վերանորոգման և էներգաարդյունավետության ապահովման համար,
3) Բնակարանային ոլորտում աջակից ծառայություններ
4) Աղետների ռիսկի նվազեցում և արձագանքում:

Բնակարանների վերանորոգման ծրագրեր

ՀՖՀ Արմենիան անբավարար բնակարանային պայմանների խնդիրը փորձում է լուծել մի շարք բնակարանային միկրոֆինանսավորման ծրագրերի իրականացման միջոցով՝ համագործակցելով «Կամուրջ» ՈՒՎԿ ՓԲԸ-ի և «Նոր Հորիզոն» ՈՒՎԿ ՍՊԸ-ի հետ: Այս ծրագրերի նպատակն է օժանդակել ցածր եկամուտ ունեցող ընտանիքներին՝ վերանորոգելու և վերակառուցելու իրենց կացարանները, ավարտին հասցնելու իրենց կիսակառույց տները, բարելավելու էներգաարդյունավետությունը, ջրամատակարարման և սանիտարական պայմանները: Ծրագրերը նպատակ են հետապնդում նաև կյանքի վերակոչել պատերազմից տուժած համայնքները:

Հույս կանանց կողմից ղեկավարվող ընտանիքներին

Ապահով, պատշաճ և մատչելի բնակարանային պայմանների բացակայությունը բացասաբար է ազդում կանանց առողջության վրա: Ցածր եկամուտ ունեցող կանանց մոտ ավելի սուր է բնակարանային անբավարար պայմանների խնդիրը. նրանք անապահով և անառողջ մթնոլորտում բնակվելու ավելի մեծ ռիսկի են ենթարկվում: Ցածր եկամուտ ունեցող կանայք ավելի խոցելի են անօթևան դառնալու հարցում և ստիպված են ապրել բնակարանային անբավարար պայմաններում միջոցների սղության պատճառով:

Այս ծրագրի շրջանակներում ցածր եկամուտ ունեցող, սակայն տնտեսապես ակտիվ ընտանիքները, որտեղ գումար վաստակողը կանայք են, և ովքեր ապրում են բնակարանային անբավարար պայմաններում (ինչպես քաղաքում, այնպես էլ գյուղական համայնքներում), ստանում են ֆինանսական միջոցների կառավարման ուսուցում (ՖՄԿՈՒ) և շինարարական տեխնիկական աջակցություն (ՇՏԱ): Վերջիններս նպաստում են ընտանիքների և նրանց համայնքների ֆինանսական կայունությանը՝ միաժամանակ օգնելով նրանց զարգացնել ֆինանսական գիտելիքներ: Այսպիսով, ֆինանսական միջոցների առավել լավ կառավարման հմտությունները և տեխնիկական աջակցությունն օգնում են տնային տնտեսություններին անելու խնայողություններ, որոնք կարող են օգտագործվել տարբեր, ներառյալ բնակարանային պայմանների բարելավման նպատակներով:

Ծրագիրն իրականացվում է «Նոր Հորիզոն» ՈՒՎԿ-ի հետ համագործակցությամբ:

ՀՖՀ Արմենիայի բնակարանային միկրոֆինանսավորման ծրագրերի շրջանակներում 2013 ֆինանսական տարում օժանդակություն է ստացել 1,350 ընտանիք (տես գծապատկեր 1): 2014 ֆինանսական տարվա ընթացքում ՀՖՀ Արմենիան նախատեսում է աջակցել ևս 1,200 ընտանիքների:

ՀՖՀ Արմենիան ներգրավված է նաև այնպիսի հիմնական ռազմավարական ուղղություններում իրականացվող աշխատանքներում, ինչպիսիք են ջրամատակարարումը, սանիտարական հիգիենան, էներգաարդյունավետությունն (ԷԱ) ու աղետների ռիսկի նվազեցումն ու արձագանքումը (ԱՌՆԱ) (անհրաժեշտության դեպքում):

2013 ֆինանսական տարվա մեր ծրագրերն էական դրական ազդեցություն են ունեցել էներգաարդյունավետության, ջրամատակարարման և սանիտարական խնդիրների լուծման գործում:

2014 ֆինանսական տարում ՀՖՀ Արմենիան պարբերաբար կգնահատի իր ծրագրերի՝ գործընկեր ընտանիքների կենսակերպի վրա ազդեցությունը և կիրագործի տարբեր մեխանիզմներ բնակարանային ոլորտում կամ համապատասխան մակարդակներում դրական ազդեցություն ունենալու համար:

Գծապատկեր 1. Գործընկեր ընտանիքներ (դինամիկա)



Գծապատկեր 2. Իրականացված ծրագրերի ազդեցությունը գործընկեր ընտանիքների վրա



Գծապատկեր 3. ***2013*** ֆինանսական տարում գործընկեր ընտանիքներն՝ ըստ մարզերի



Գծապակեր 4. ***2013*** ֆինանսական տարում ֆոնդերի տեղաբաշխումն՝ ըստ մարզերի



Մետաֆինանսավորում

Հայաստանի բնակարանային ֆոնդի մի մեծ հատված անմխիթար վիճակում է և շարունակում է վատթարանալ: Տնային տնտեսությունների եկամտի կրճատումը, որը հետևանք էր տնտեսության անցումային փուլի, սահմանափակել է բնակարանային ֆոնդի վերանորոգմանն ու սպասարկմանն ուղղվող միջոցները: Ոլորտի վրա համարժեք բացասական ազդեցություն է ունեցել նաև բնակիչների փորձի և սեփականատիրությունից բխող պարտականություններիմասին տեղեկացվածության ցածր մակարդակը: Սպասարկման վճարներն այնքան ցածր են, որ բավարար չեն անգամ շենքերի վերանորոգման ծախսերը ծածկելու համար: Արդյունքում, շենքերի վիճակի վատթարացումը շարունակվում է, իսկ կոմունալ ծառայությունների տրամադրումը անբավարար է: Բնակարանների ջեռուցման ծախսերը տարածաշրջանի երկրներում կազմում է ընդհանուր էներգիայի օգտագործման 30%-ից ավելին, քանի որ բազմաբնակարան շենքերի կառուցման նախկին չափանիշները և ջեռուցման մեթոդները հաշվի չեն առել էներգաարդյունավետությունը. էներգիայի անարդյունավետ օգտագործումը առավել բացասական ազդեցություն է ունենում էներգակիրների գների բարձրացման հետևանքով ցածր եկամուտ ունեցող տնային տնտեսությունների վրա:

ՀՖՀ Արմենիան իրականացնում է բազմաբնակարան շենքերի ընդհանուր օգտագործման տարածքների վերանորոգման և էներգաարդյունավետության բարձրացմանն ուղղված երկու ծրագիր:

Ծրագիր 1. Բազմաբնակարան շենքերի վերանորոգման ծրագիրը

մեկնարկել է 2011 թ. և նպատակ է հետապնդում վերանորոգել բազմաբնակարան շենքերի ընդհանուր օգտագործման տարածքները (տանիք, պատուհաններ և դռներ, խողովակներ, շքամուտք և այլն)՝ նպաստելով էներգաարդյունավետության բարձրացմանը: Այս նպատակով մշակվել է ֆինանսական մոդել, որը վարկային ռեսուրսների և քաղաքապետարանի կողմից հատկացվող սուբսիդիաների համակցություն է: Ծրագիրն իրականացվում է «Ինեկոբանկ» ՓԲԸ-ի հետ համատեղ: Վարկերը տրվում են համատիրություններին, որոնք կարևոր դեր են խաղում նշված բարենորոգումների գործում: 2013 ֆինանսական տարվա չորրորդ կիսամյակի դրությամբ երկու ենթածրագիր արդեն իսկ իրականացվել է Լոռու մարզի Վանաձոր քաղաքում: Երկու բազմաբնակարան շենքերի տանիքներն ամբողջությամբ վերանորոգվել են, որի համար անհրաժեշտ ֆոնդերի 40%-ը սուբսիդիայի տեսքով տրամադրել էր տեղի քաղաքապետարանը, իսկ մնացած 60%-ը տրամադրվել էր վարկային ռեսուրսների միջոցով: Արդյունքում, շահառուների թիվը կազմեց 63 ընտանիք կամ 252 մարդ:

Ծրագրի իրականացման հաջորդ վայրը Երևանն է: ՀՖՀ Արմենիայի կողմից մայրաքաղաքում ծրագրի շրջանակներում կատարվելիք շինարարության համար նախնական պայմանավորվածություն է ձեռք բերվել Երևանի քաղաքապետի հետ քաղաքապետարանի կողմից աշխատանքների 30%-ի չափով ֆինանսավորում տրամադրելու մասին:

Ծրագիր 2. 2013 ֆինանսական տարում ԱՄՆ ՄԶԳ-ն և ՀՖՀԻ-ն համաձայնագիր ստորագրեցին Եվրոպայում և Եվրասիայում բազմաբնակարան շենքերի էներգաարդյունավետության բարձրացման (ԲԲՇԷԱԲ) ծրագիրը համատեղ իրականացնելու վերաբերյալ:

Վերջինիս միջոցով գործընկերները ծրագրում են ԷԱ ապահովման միջոցով դրական ազդեցություն ունենալ էներգակիրների գների բարձրացման հետևանքով բազմաբնակարան շենքերում բնակվող ցածր եկամուտ ունեցող ընտանիքների կողմից էներգիայի համար վճարվող գումարների աճի զսպման գործում: Նախատեսվում է նաև էներգաարդյունավետության մասով բարեփոխումներ իրականացնել ամբողջ տարածաշրջանում: Ծրագրի նպատակն է բարելավել Հայաստանում 1-3 բազմաբնակարան շենքերում բնակության պայմանները մինչև 2015 թ. հունիսը: Ծրագիրը մասնավորապես ուղղված է տարածաշրջանային ռեսուրսների և ցանցերի մոբիլիզացմանը բազմաբնակարան շենքերում էներգիայի աճող ծախսերի խնդիրը լուծելու համար: Այս խնդիրը կլուծվի ընտրված բազմաբնակարան շենքերի համար կենսունակ և կայուն ֆինանսական մոդելների մշակման միջոցով:

Այս ծրագրերը կօգնեն խթանել համատիրությունների կողմից կառավարվող շենքերի բնակիչների, տեղական ինքնակառավարման մարմինների և ֆինանսական հաստատությունների (ՖՀ) միջև արդյունավետ համագործակցությունը, որն էլ իր հերթին կայունացնող ազդեցություն կունենա համայնքի կյանքի վրա: Այնուհետև, ՖՀ-ների կարողությունների զարգացումը կհանգեցնի առավել մրցակցային և գրավիչ (մատչելի) վարկային պրոդուկտների ստեղծմանը: Այդպիսով, նման ծրագրերը հետագայում կարող են ֆինանսավորվել հենց ՖՀ-ների կողմից՝ երաշխավորելով կայուն ֆինանսական մոդելներ:

ՀՖՀ Արմենիան Հայաստանում հանդիսանում է նման ֆինանսական մոդելների ստեղծման և զարգացման հեղինակ: Այդուհանդերձ, ծրագրերի ապագան կախված է ՖՀ-ներից և նրանց կողմից նման վարկային պրոդուկտների տրամադրումից: Համատիրությունները (ձեռք բերված նոր կարողություններով և գիտելիքներով) իրենց հերթին հնարավորություն կունենան ուղղակիորեն դիմել ՖՀ-ներին և վարկ վերցնել: Ծրագրերը նպատակ ունեն նաև զարգացնել այնպիսի ֆինանսական մոդելներ, որոնք կնպաստեն ֆինանսական շուկայի ակտիվացմանը՝ այդպիսով կենտրոնանալով բանկային ոլորտի վրա, որին համընթաց կիրականացվեն հաջողությամբ պլանավորված բնակարանային ֆինանսավորման մոդելներ (բանկային վարկեր համատիրություններին), որն էլ արդյունքում կհանգեցնի ընդհանուր շահ հետապնդող համայնքների ֆինանսավորման վերարտադրվող և կայուն մոդելների ստեղծմանը:

2014 ֆինանսական տարում ՀՖՀ Արմենիան ծրագրում է օժանդակել 80-120 ընտանիքների (շուրջ 320-480 մարդ)՝ վերանորոգելով առնվազն երկու-երեք բազմաբնակարան շենքերի փսասված հատվածները՝ բացառությամբ կրող կոնստրուկցիաների:

Բնակարանային ոլորտում աջակից ծառայություններ

Անբավարար բնակարանային պայմանների նվազեցման և ցածր եկամուտ ունեցող ընտանիքներին պատշաճ բնակարանային պայմաններով ապահովելու, ինչպես նաև վերջիններիս կողմից ֆինանսական միջոցներ հայթայթելուն օժանդակությունն տրամադրելու համար ՀՖՀ Արմենիան նշված ընտանիքներին աջակցում է բնակարանի վերանորոգման և այդ աշխատանքների կազմակերպման հարցում, տրամադրում ՖՄԿՈՒ, ՇՏԱ և ԷԱ վերաբերյալ դասընթացներ և խորհրդատվություն: ՖՄԿՈՒ-ն հնարավորություն է տալիս ցածր եկամուտ ունեցող ընտանիքներին ավելի լավ կառավարել իրենց բյուջեն, որը երկարաժամկետ կտրվածքում հանգեցնում է նրանց ֆինանսական միջոցների աճին: Ծրագրի շրջանակներում ընտանիքները տեղեկանում են, թե ինչ ֆինանսական պրոդուկտներ կան շուկայում և ինչպես նվազեցնել առնչվող ռիսկերը: Շինարարության տեխնիկական խորհրդատվության իրականացումը դասընթացների, ծանոթացումների, ինչպես նաև ուղեցույցների և ձեռնարկների տրամադրման միջոցով օգնում են ընտանիքներին իրենց տները կամ կացարանները կառուցել առավել անվտանգ եղանակով՝ պահպանելով բնակարանային շինարարության որակի չափանիշները, ինչպես նաև կայունությունը և պաշտպանվածությունը՝ բնության երևույթներից ու աղետներից, ինչպիսիք են՝ երկրաշարժը, սողանքները և ջրհեղեղները: Ինչ վերաբերում է տեխնիկական օժանդակության ծառայություններին՝ դրանց շնորհիվ ապահովվում է բնակարանային ֆոնդի որակյալ՝ վերանորոգումը, կայունությունը, երկարակեցությունը՝ խուսափելով հավելյալ միջամտություններից և ծախսերից, ցածրորակ շինարարական աշխատանքներից:

Գծապատկեր 5. Մետաֆինանսավորման միջոցով օժանդակություն ստացած ընտանիքները



Գծապատկեր 6. Բնակարանային ոլորտում աջակից ծառայությունների տրամադրում



Եվ վերջապես, լավ կառուցված և կամ վերանորոգված տունը, հաշվի առնելով ԷԱ բարձրացման ուղղությամբ կատարվող միջամտությունները (ինչը բերում է ընտանիքների կողմից էներգիայի համար կատարվող ծախսերի նվազեցմանը), ուղղակիորեն նպաստում է մեր առաքելության առանցք կազմող պարզ, պատշաճ և մատչելի տների կառուցմանը: Կոմունալ ցածր ծախսերը բարձրացնում են խնայողությունների չափը և ընտանիքներին հնարավորություն տալիս գումար կուտակել և հաղթահարել բնակարանային աղքատությունը: Էներգաարդյունավետ շինարարությունն ու ապրելակերպը նվազեցնում են շրջակա միջավայրի, գլոբալ տաքացման և կլիմայի փոփոխության վրա բացասական ազդեցությունը:

ՀՖՀ Արմենիան օժանդակում է նաև ՈՒՎԿ-ներին ինստիտուցիոնալ մակարդակում տեխնիկական աջակցություն ցուցաբերելու միջոցով, ինչպես նաև առանձին հաճախորդների սպասարկման մակարդակում՝ ՈՒՎԿ-ների կարողությունների զարգացման (վարկային գործակալների ուսուցում, ծրագրերի մոնիթորինգ, շուկայի ուսումնասիրություն, բնակարանային վարկի նոր պրոդուկտների մշակում, կրթական և առաջնորդման նյութեր) միջոցով այնպես, որ դրանք կարողանան բնակարանային միկրոֆինանսավորման պրոդուկտներ և ծառայություններ մատուցել շահառու խմբերին:

2013 ֆինանսական տարում ՀՖՀ Արմենիան բնակարանային ոլորտում աջակից ծառայություններ է մատուցել 150 անձանց: 2014 ֆինանսական տարվա համար այս ծառայությունների մատուցման պլանավորված թիվը կազմում է 1200 մարդ:

Աղետների ռիսկերի նվազեցում և արձագանքում (ԱՌՆԱ)

ՀՖՀ Արմենիան Աղետների կառավարման թիմի (ՄԱԶԾ Հայաստան) և Ազգային պլատֆորմի (ԱՊ) անդամ է և արտակարգ իրավիճակների դեպքում ներգրավվելու է համատեղ գործողություններում աջակցելու Հայաստանի կառավարությանը կյանքեր փրկելու և կորուստներ նվազեցնելու գործում:

ԱՌՆԱ հիմնական գործողությունները ներառում են ռիսկերի արձագանքման պատրաստվածությունը և արձագանքումը:

ՀՖՀ Արմենիայի Աղետների պատրաստվածության և արձագանքման ռազմավարությամբ սահմանվում են ՀՖՀ Արմենիայի աղետների արձագանքման ծրագրի սկզբունքները, չափանիշները, ինչպես նաև գործողությունների ու համագործակցության շրջանակները:

Աղետների ռիսկերի նվազեցումը

Ներկայում ՀՖՀ Արմենիան մշակում է աղետների ռիսկերի նվազեցման մի շարք ռազմավարություններ: Դրանք, մասնավորապես, ներառում են աղետների ռիսկերի կառավարման վերաբերյալ մասնագիտական տեխնիկական խորհրդատվության տրամադրում տվյալ տարածաշրջանի ընտանիքներին: Առաջիկայում ծրագրվում է միկրոֆինանսավորման կարողությունների զարգացման ծրագրերին կից համապատասխան ցուցումներ պարունակող պաստառների տպագրություն: Ծրագրվում է նաև հատուկ ուշադրություն դարձնել համատիրությունների միջոցով կառավարվող բազմաբնակարան շենքերի որոշակի մասերի վերանորոգմանը, ինչպիսիք են աստիճանավանդակները և ելքերը աղետի դեպքում շենքից տարհանման արագ և ապահով իրականացմանը օժանդակելու համար: Այլ տեսակի միջամտություններ կմշակվեն հնարավորության դեպքում տեղական համայնքների և այլ գործընկերների հետ միասին:

ՀՖՀ Արմենիան մշտապես բաց է գործընկերային կապերի համար, ինչպես նաև ողջունում է ազգային և տեղական մակարդակով նվիրատուների ներգրավումը համայնքներում ռիսկերի գնահատման և պաշտպանական հզորությունների ստեղծման ծրագրերում:

Պատրաստվածությունը

ՀՖՀ Արմենիան գիտակցում է աղետների արձագանքման արդյունավետ պատրաստվածության կարևորությունը և առավելագույն ջանքեր է ներդնում հզորացնելու ինչպես աղետների արձագանքման իր ցանցը, այնպես էլ զարգացնելու իր կազմակերպական կարողությունները աղետներին արձագանքելու նպատակով:

ՀՖՀ Արմենիայի Աղետների արձագանքման ծրագիրը նպաստում է կարողությունների բարձրացմանը անձնակազմին ԱՌՆԱ վերաբերյալ կրթելու միջոցով:

Արձագանքումը

ՀՖՀ Արմենիան մշակել է երկրին համապատասխանող Աղետների արձագանքման օպերատիվ պլան: Պլանով նախատեսվում է արձագանքման ժամանակացույցը՝ կից գնահատման ձևաթղթերով, հաղորդակցության ստանդարտ նյութերով, օրինակելի բյուջեներով և տեխնիկական լուծումներով, որն իրատեսորեն կարող է կիրառվել աղետի դեպքում:

Խմբային (կլաստերային) մոտեցումը

Լինելով Աղետների ռիսկերի նվազեցման ազգային պլատֆորմի (ԱՌՆԱ ԱՊ) ընդլայնված Աղետների կառավարման թիմի (ԱԿԹ) անդամ՝ ՀՖՀ Արմենիան կիսում է այն մոտեցումը, որ արտակարգ իրավիճակի դեպքում նույն խմբով կմասնակցի Երկրի հումանիտար թիմի (ԵՀԹ) աշխատանքներին:

ՀՖՀԻ–ի ընթացակարգերից բացի, ԵՀԹ-ի իրավասությանն առնչվող արտակարգ իրավիճակի դեպքում ՀՖՀ Արմենիան (լինելով ԵՀԹ–ի և կլաստերների անդամ) կընդունի «կլաստերային մոտեցում», որը ենթադրում է այն ոլորտներին/գործողություններին առաջնայնություն տալը, որոնց կարիքը հիմնականում լինում է արտակարգ իրավիճակներին արձագանքելու համար:

Երկրի (անհրաժեշտության դեպքում նաև տարածաշրջանային պատվիրակությունները) գործակալությունները կստանձնեն կլաստերի կողմից առաջնորդվող պատասխանատվություններ, որոնք ընդունված են հումանիտար արձագանքման գլոբալ չափանիշներով:

ՀՖՀ Արմենիան նաև Կացարանի, Վաղ վերականգնման և Ջրամատակարարում և Սանիթարիա խմբերի անդամ է:

Փոխելով ընտանիքի կյանքը

Արտուշ Նաղդալյանի ընտանիքը

Նաղդալյանների ընտանիքի համար ՀՖՀ Արմենիայի հետ համագործակցությունը Աստծո կողմից տրված երկրորդ ամենամեծ նվերն էր Ալինայի (նրանց թոռնուհու) լույս աշխարհ գալու իրադարձությունից հետո:

Նաղդալյանների ընտանիքում ամեն ինչ գլխիվայր շուռ եկավ այն օրը, երբ Արտուշի (48տ.) և Ալինայի (47տ.) մեծ որդին մահացավ ավտովթարից: Նրա մահից մի քանի օր անց ծնվեց նրա դուստր Ալինան (5տ.): Նաղդալյանների ցավն էլ ավելի մեծացավ, երբ փոքրիկ Ալինայի մայրը լքեց նրանց:

Ողբերգությունը ցնցեց ընտանիքը: Օրուգիշեր տիկին Ալինան ողբում էր իր որդու մահը: Իրենց ցավին դարման անելու համար Արտուշն ու Ալինան վաճառեցին իրենց տունը և որդու գերեզմանին շիրմաքար դրեցին: Ընտանիքը դարձավ անտուն և տեղափոխվեց ապրելու բարեկամներից մեկի դատարկ տանը:

Մի քանի տարի անց ընտանիքը գիտակցեց, որ իրենց տուն է հարկավոր: Արտուշը աշխատում էր տեղի էլեկտրականության բաշխման ցանցում և կարողացավ մի տուն գնել հին տան վաճառքից մնացած գումարներով: Սակայն նոր տունը չուներ որևէ տարրական հարմարություն և ներքին վերանորոգման հրատապ կարիք ուներ: Նրանք ցանկանում էին ապահով կենսապայմաններ ստեղծել իրենց միակ թոռնուհու համար, սակայն որևէ հնարավորություն չունեին մինչև այն պահը, երբ տեղեկացան ՀՖՀ Արմենիայի մասին:

«Մենք բավարար գումար չունեինք մեր տունը բնակության համար պատշաճ պայմաններով ապահովելու համար: Մենք այնքան ուրախ ենք, որ Հաբիթաթը մեզ ընտրել է որպես գործընկեր ընտանիք: Երկար տարիներ մենք երազում էինք ստեղծել պատշաճ բնակության պայմաններ մեր երկրորդ որդու և մեր թոռնուհու համար, ով մեր մեծ որդու միակ ժառանգն է: Մինչդեռ դա հնարավոր դարձավ ՀՖՀ Արմենիայի աջակցության շնորհիվ: Շնորհակալ ենք արժանապատիվ բնակելի պայմանների հնարավորություն ընձեռելու և ավելի լավ ապագայի հույս ներշնչելու համար»,– ասում է Արտուշը:

Նաղդալյանների ընտանիքի համար ՀՖՀ Արմենիայի հետ համագործակցությունը Աստծո կողմից տրված երկրորդ ամենամեծ նվերն էր Ալինայի (նրանց թոռնուհու) լույս աշխարհ գալու իրադարձությունից հետո: Երբ նրանց որդին մահացավ, Նաղդալյանների կյանքի իմաստը կորավ: Սակայն Ալինայի ծնունդը նրանց վերապրելու ուժ տվեց, և նրանք սկսեցին ապրել և ստեղծել ապահով կացարան, որպեսզի թոռնուհին մեծանա առողջ միջավայրում:

Իշխան Հակոբյանի ընտանիքը

Հակոբյանների ընտանիքի երիտասարդ կանանց համար տան վերանորոգումը, հաշվի առնելով տվյալ տարածաշրջանի խիստ կլիման, ազդարարում են ավելի լավ պայմաններ, ինչպես նաև հոգու հանգստություն՝ սպասվող երեխայի ծննդյան ու նորածնի ապահովության առումով, քանի որ տունը կունենա այնպիսի պատուհաններ և դռներ, որոնք տան տաքությունը կպահեն ներսում:

Շատ տպավորիչ էր տեսնել Իշխանի տունը, որը ծվարած է գեղեցիկ լեռնային գյուղի գողտրիկ անկյունում: Էլ ավելի ազդեցիկ էր տիկին Հակոբյանի, նրա 18–ամյա դստեր ու 20–ամյա հարսի ընդունելության ու հյուրընկալության ջերմությունը Հաբիթաթի ներկայացուցիչներին: Թեև նրա 49–ամյա ամուսին Իշխանը և 19–ամյա որդի Արամը ընտանիքը պահելու համար մեկնել էին Ռուսաստան՝ արտագնա աշխատանքի, և ներկա չէին, Հակոբյանների ընտանիքի կանայք մեզ վստահեցրին, որ նրանք նմանապես կիսում են այն երախտագիտությունը, որ ընտանիքը հայտնում է Հաբիթաթին՝ արտաքին պատուհանների և դռների հույժ անհրաժեշտ փոխարինման և վերանորոգման համար: Տիկին Հակոբյանն ունի շնչառական խնդիրներ, որոնք ավելի էին վատթարանում դռների և պատուհանների մեկուսացման անբավարար հատկությունների պատճառով: Վերանորոգման շնորհիվ, ինչպես նշեց տիկին Հակոբյանը, իր առողջությունը զգալի լավացել է, իսկ ինքն էլ անհամբեր սպասում է իր առաջնեկ թոռնիկի ծնվելուն: «Սենյակների ներքին հարդարման, դռների և պատուհանների վերանորոգման արդյունքում տան ջերմությունը չի կորչում, իսկ խոնավությունը, որը ազդում էր իմ առողջության վրա, պակասել է»,– ասում է տիկին Հակոբյանը:

Հակոբյանների ընտանիքի երիտասարդ կանանց համար այս վերանորոգումները, հաշվի առնելով տվյալ տարածաշրջանի խիստ կլիման, ազդարարում են ավելի լավ պայմաններ, ինչպես նաև հոգու հանգստություն՝ սպասվող երեխայի ծննդյան ու նորածնի ապահովության առումով, քանի որ տունը կունենա այնպիսի պատուհաններ և դռներ, որոնք տան տաքությունը կպահեն ներսում:
«Չեմ կարող նկարագրել, թե որքան շնորհակալ եմ ՀՖՀ Արմենիային անգնահատելի օժանդակության համար: Մենք դժվար թե կարողանայինք դա անել մեր ուժերով: Իրոք, շատ ուրախ ենք, որ հնարավորություն ունեցանք գործընկեր ընտանիք դառնալ ՀՖՀ Արմենիայի նման կազմակերպության համար: Իրենց աշխատանքը մեծ փոփոխություններ է կատարում այս շրջանում, քանի որ գիտեմ, որ համայնքում կան մի շարք այլ ընտանիքներ, ում նույնպես օժանդակություն են տրամադրել»,– ասում է Սաթենիկը:

ԳԼՈՒԽ 2

Կամավորական աշխատանքը ՀՖՀ Արմենիայի հետ

Գլոբալ վիլիջ

ՀՖՀ Արմենիան իրականացնում է Գլոբալ վիլիջ ծրագիրը, որը կամավորներին հնարավորություն է ընձեռում մասնակցել տների կառուցման և վերանորոգման նպատակով դեպի Հայաստան կարճաժամկետ ուղևորություններին՝ ամիջականորեն ներգրավվելով Հաբիթաթի աշխատանքներին: Աշխարհի բոլոր անկյուններից կամավորները միանում են Հաբիթաթի առաքելությանը՝ բարելավելու ցածր եկամուտ ունեցող ընտանիքների բնակարանային պայմանները: Հաբիթաթ Արմենիայի հետ միասին Գլոբալ վիլիջ թիմի անդամները ձեռք ձեռքի աշխատում են գործընկեր ընտանիքների և համայնքի անդամների հետ՝ բարեկարգելով տներ և իրագործելով անբավարար բնակարանային պայմանների խնդրի և Հայաստանում, և ամբողջ աշխարհում Հաբիթաթի՝ պարզ ու մատչելի բնակարանային պայմաններ ստեղծելուն ուղղված ջանքերի մասին: Որպես գործընկերներ՝ թիմի անդամներն օգնում են կառուցելու սիրո, կացարանների, համայնքների և հույսի համաշխարհային ավան:

2013 ֆինանսական տարվա ընթացքում ՀՖՀ Արմենիան հյուրընկալել է չորս Գլոբալ վիլիջ խմբերի ԱՄՆ-ից, Եվրոպայից և Կանադայից:

Կամավորների փորձը

“

Մարդիկ յուրահատուկ են: Այդ ամենը սկսվում է այն ընտանիքից, որին տալիս ես քո ժամանակը, գումարը և եռանդը, իսկ Հայաստանի մարդիկ աննկարագրելի են: Նրանք քեզ հետ միասին աշխատում են, մատուցում ամենահամեղ տնական ճաշատեսակներ, իրենց հոգատարությունն ու սերը ցուցադրելու համար ամեն օր գրկախառնվում են քեզ, ուզում են իմանալ քո մասին և, իրոք, գնահատում են այն ամենը, ինչ դու անում ես նրանց համար:

Երկրորդը մշակույթն է, պատմությունը և Հայաստանի գեղեցիկ ու հինավուրց հողը: Երևան քաղաքն աշխույժ ու կառավարելի է և հիանալի վայր անցկացնելու երկրում գտնվելու քո առաջին և վերջին օրերը: Մեքենայով ամեն օր գնալը Գավառի մոտ գտնվող մեր շինարարության վայր նման չէր գյուղական այլ ճանապարհների: Սևանա լճի երկայնքի սարերով անցնող ոլորապտույտ մայրուղին գունավորված էր վայրի ծաղիկներով, խոշոր և մանր եղջերավոր անասուններին արածացնող հովիվներով և նույնիսկ ծովից վեր խոյացող կրկնակի ծիածանով: Ակնածանքն ու գեղեցկությունն անհնար է նկարագրել:

Հայաստանը նաև հատուկ հոգևոր վայր է: 301 թ. քրիստոնեությունը որպես առաջինը պետական կրոն ընդունած երկիր՝ դեպի բազմաթիվ վանքեր կատարած արշավները մտորումների տեղիք էին տալիս, և մեր հանգստյան օրերին Կաթողիկոսանիստ մայր տաճարում կիրակնօրյա պատարագին ներկա լինելը ևս բառերով չես նկարագրի: Տեսնել Արարատ լեռը, ուր ջրհեղեղից հետո հանգրվանել է Նոյան տապանը և այցելել Հայոց եղեռնի հուշարձանը մշակութային ամենավառ փորձառություններից էին: Այժմ, երբ ես նայում եմ հայելուն, կարող եմ ասել. «Այո, ես այլ մարդու եմ տեսնում»:

“

Էմի Գրեմբո
Կամավոր ԱՄՆ-ից

Hel build it!
ReStore
ReStore

Կամավորների փորձը

Դժվար է բառեր գտնել նկարագրելու, թե, իսկապես, ինչքան հրաշալի էր ՀՖՀ Արմենիայի հետ ունեցած իմ փորձառությունը: Սկզբից մինչև վերջ այս արագ ընթացող, լավ կազմակերպված, մշակութապես բազմազան ծրագիրն ինձ և իմ թիմին անմոռանալի պահեր պարգևեց: Աշխատավայրից մինչև պատմական տեսարժան վայրեր ծրագիրը լավ պլանավորված էր, իսկ անձնակազմի հետ աշխատելն ուղղակի հաճույք էր: Նաիրան, Անդրեն և Սեդան մեզ շատ լավ հյուրընկալեցին և, բնականաբար, առաջին իսկ օրից դարձան մեր թիմի մաս: Շատ հաճելի էր աշխատել ընտանիքի հետ, և շինարարության վայրում նրանց և նրանց երեխաների ներկայությունից մենք զգում էինք, որ մեր արած աշխատանքը էական է և արժեքավոր: Հատկապես պետք է հիշատակել ուտելիքի մասին, քանի որ այն եղել է Հաբիթաթում սննդի հետ կապված իմ ունեցած ԼԱՎԱԳՈՒՅՆ փորձառությունը: Ընդհանուր առմամբ, մենք բոլորս կարծում ենք, որ սա մեզ համար հրաշալի փորձառություն էր: Որպես թիմի առաջնորդ՝ ես մեծ պատիվ կհամարեմ վերադառնալ և ապագայում շարունակել իմ աշխատանքը Հաբիթաթի անձնակազմի հետ Հայաստանում՝ օգնելու վերացնել աղքատ բնակարանային պայմանների խնդիրն այս իրապես զարմանալի մարդկանց հոյակապ երկրում:

Մարիա Պետրենկո
Գլոբալ Վիլիջ թիմի
ղեկավար ԱՄՆ-ից

Մեկօրյա շինարարություն

Մեկ օրով Հաբիթաթ շինարարությունում ընդգրկվելը շատ լավ հնարավորություն է բիզնեսների, կորպորատիվ խմբերի և կազմակերպությունների համար իրականացնելու կարիքավոր ընտանիքների երազանքը՝ ունենալ ապահով, հարմարավետ և մատչելի բնակարան: Միևնույն ժամանակ քո գործընկերների և ղեկավարների հետ միասին Հաբիթաթի շինարարությունում ընգրկվելը շատ լավ միջոց է՝ թիմ ձևավորելու և զարգացնելու համար, ինչես նաև ձեռք բերելու առաջնորդի հմտություններ:

ՀՖՀ Արմենիան 2011թ. իրականացնում է Մեկօրյա շինարարություն կամավորական ծրագիրը, որը կոչ է անում մասնավոր, միջազգային և տեղական կազմակերպություններին և խմբերին՝ միանալու կամավորական բնակարանաշինական աշխատանքներին և բարելավելու ցածր եկամուտ ունեցող ընտանիքների կենսապայմանները՝ ունենալու ապահով, մատչելի և հարմարավետ բնակվելու պայմաններ՝ դրանով իսկ փոխելով մարդկանց և համայնքների կյանքը: Կոկա-Կոլա Հելլենիկ Արմենիա ընկերությունը միացավ այս արշավին 2013թ. հունիս ամսին:

Հայաստանում Կոկա-Կոլա Հելլենիկ Արմենիա ընկերության ղեկավար-կամավորների խումբը միացել է ՀՖՀ Արմենիա հիմադրամի աշխատակիցներին և Վարդան Գրիգորյանի ընտանիքին՝ մասնակցելով Հաբիթաթի Արմենիայի կողմից նախաձեռնած երկօրյա բնակարանաշինական աշխատանքներին:

«Հաբիթաթ Արմենիա հիմադրամն իր աջակցության ծրագրերը իրականացնում է համագործակցության սկզբունքով. համագործակցություն գործընկեր ընտանիքի, կամավորների և կազմակերպությունների հետ: Մասնավոր ընկերությունների ներգրավումը հայ ընտանիքների ապրելակերպի բարելավման գործընթացում շատ էական է, և մենք Հաբիթաթում կարևորում ենք այն: Կոկա-Կոլա Հելլենիկ Արմենիայի մասնակցությունը ողջունելի է և, հուսով եմ՝ լավ օրինակ կծառայի մյուսների համար»,-ասաց Լուիզա Վարդանյանը՝ ՀՖՀ Արմենիա հիմադրամի գործադիր տնօրենը:

Հունիսի 29-30-ը Կոկա-Կոլա Հելլենիկ Արմենիա ընկերության 15 ղեկավար անձերից բաղկացած կամավորների խումբը շինարարական աշխատանքներ իրականացրեց Երևանից 120կմ հեռավորության վրա գտնվող Աղավնաձոր գյուղում (Վայոց ձորի մարզ)՝ օժանդակելու ցածր եկամուտ ունեցող ևս մեկ հայ ընտանիքի իրականացնել իր երազանքը, այն է՝ ունենալ ապահով և պատշաճ տուն: Երկու օրվա ընթացքում կամավորներն իրականացրին հատակի երեսպատման և հարթեցման աշխատանքներ:

Կոկա-Կոլա Հելլենիկ Արմենիա ընկերության ղեկավար անձնակազմի համար այսօր հատուկ օր է՝ մենք մեր ձեռքերով օգնում ենք Գրիգորյանների ընտանիքի երազանքի իրականացմանը՝ սեփական հարմարավետ տան կառուցմանը: Կոկա-Կոլա Հելլենիկ Արմենիա ընկերության աշխատակիցների համար Հաբիթաթ ֆոր Հյումենիթի Արմենիա հիմադրամի կամավորական շինարարության ծրագրում մասնակցելը պատիվ և պատասխանատվություն է: Մեր ընկերությունը միշտ կանգնած է մեր համայնքների կողքին և Կոկա-Կոլա-ի կայուն զարգացման ծրագրերը կրում են շարունակական և բազմապարփակ բնույթ:

Գագիկ Դանիելյան՝ Կոկա-Կոլա Հելլենիկ Արմենիա ընկերության գլխավոր տնօրեն

Փոխելով ընտանիքի կյանքը

Լուիզա Խաչատրյանի ընտանիքը

Ավելի քան տաս տարի Լուիզա Խաչատրյանի 8 անդամից բաղկացած ընտանիքը ստիպված էր կիսել իրենց տունը ևս 16 անդամից բաղկացած իրենց քույրերի և եղբայրների ընտանիքների հետ: 1990–ականներին, երբ երկու ընտանիքներն էլ ընդլայնվեցին, Լուիզայի ամուսին Արսենը (45տ.) որոշեց առանձնանալ և իր ընտանիքի հետ առանձին ապրել: Նա սկսեց իր սեփական տան շինարարությունը, սակայն ֆինանսական միջոցների սղության պատճառով չկարողացավ այն ավարտին հասցնել:
«Մենք բավարար միջոցներ չունեինք ապրելու և միաժամանակ տունն ավարտին հասցնելու համար, քանի որ երեխաներ էինք մեծացնում»,–ասում է Արսենը:
Լուիզան (43տ.) և Արսենը (45տ.) չորս որդի ունեն՝ Մովսեսը (25տ.), Մամիկոնը (22տ.), Վահանը (20տ.) և Էդմոնդը (13տ.), որոնցից երեքն աշխատում են ՀՀ զինված ուժերում: Մովսեսն ամուսնացած է Մելինեի (25տ.) հետ, և նրանք ունեն մի դուստր՝ Լուիզան (3տ.):
Ընտանիքի ընդհանուր եկամուտն այնքան բարձր չէր, որպեսզի միաժամանակ հնարավորություն տար առօրյա ծախսերը հոգալու և բնակարանային խնդիրը լուծելու համար: Լուիզան մշտական աշխատանք չունի, սակայն հողի մշակման կամ անասնապահական աշխատանքներ է կատարում:

Ընտանիքը կորցրել էր բնակարանային պայմանները բարելավելու հույսը մինչև այն օրը, երբ տեղեկացան ՀՖՀ Արմենիայի բնակարանային միկրոֆինանսավորման ծրագրի մասին: Հաբիթաթի միջամտությունը Խաչատրյանների կյանքում անմիջապես փոփոխություն մտցրեց: *«Մենք շատ էինք ընկճվում այդ անտանելի պայմաններից և հնարավորություն չունեինք բարելավելու դրանք: Հնարավոր չէ նկարագրել, թե որքան հաճելի է ընտանիքդ պատշաճ բնակարանային պայմաններով ապահովելու հնարավորություն ստանալը»*,– ասում է Լուիզան:
Խաչատրյանների ուրախությունը կրկնապատկվեց, երբ նրանք Գլոբալ վիլիջ ծրագրի շրջանակներում ընտրվեցին որպես հյուրընկալ ընտանիք միջազգային կամավորների խմբի համար, որոնք օգնեցին նրանց ավարտին հասցնել կիսակառույց տան շինարարությունը: Մոտ մեկ շաբաթ Հյուսիսային Իռլանդիայից ժամանած կամավորների «Երիտասարդ շինարարներ» թիմն աշխատեց Լուիզայի ընտանիքի հետ ձեռք ձեռքի:
«Դժվար է բառերով նկարագրել, թե որքան երախտապարտ ենք ՀՖՀ Արմենիային և նրա հիանալի կամավորներին, որոնք եկել էին հեռավոր վայրերից՝ օգնելու մեզ վերանորոգման աշխատանքներում: Շատ կարճ ժամանակում նրանք դարձան մեր ընտանիքի մասը և մշտապես կմնան մեր մտքում և սրտերում: Այժմ մենք մտածում ենք անգամ ընտանիքը համալրելու մասին: Իմ կյանքի երազանքն իրականություն դարձավ: Շնորհակալ ենք այս նախաձեռնության համար», ասում է Լուիզան:

Վարդան Գրիգորյանի ընտանիքը

«Հաբիթաթի հետ համագործակցությունն ինձ ապահովության զգացում տվեց: Ես, իսկապես, շատ տպավորված եմ Հաբիթաթ Արմենիայի աշխատանքով: Դու ստանում ես աջակցություն և տալիս այն մարդկանց, որոնք դրա կարիքն ունեն»:

Վարդանը և իր ընտանիքը շատ ոգևորված են իրենց բնակարանային պայմանների վերջին փոփոխություններով: Գրիգորյանների ավանդական ընտանիքն իր յոթ անդամներով ապրում է մի հարկի տակ՝ Վարդանի պապենական տանը:

«Մեծ ընտանիք ունենալը շատ մեծ երջանկություն է, բայց երբ չկա բավարար տարածք բոլորի համար, համատեղ կյանքը պարզապես անհնար է»,- ասում է Վարդանը:

Վարդանն (50 տարեկան) ունի բեռնատար մեքենա և մասնավոր հիմունքներով աշխատում է որպես վարորդ, սակայն նրա աշխատանքը սեզոնային է: Սաթիկը՝ (48 տարեկան) Վարդանի կինը, զբաղվում է հողագործությամբ, անասնապահությամբ, ինչպես նաև տնային տնտեսությամբ:

Սաթիկն ասում է. *«Շատ հոգնեցուցիչ է աշխատել մինչև ուշ գիշեր և չունենալ սեփական անկյուն հանգստանալու համար»:*

Վարդանի և Սաթիկի որդիները՝ Արսենը (27 տարեկան) և Արտյոմը (21 տարեկան), գյուղում աշխատում են որպես պահակներ: Աննան՝ (24 տարեկան) նրանց դուստրը, ևս զբաղվում է տնային տնտեսությամբ, իսկ Նոյեմը՝ (19 տարեկան) Արսենի կինը, հոգ է տանում իրենց փոքրիկ դստեր՝ Նարեի (1 տարեկան) մասին:

Ընտանիքն ընդլայնելու և երիտասարդ զույգին առանձնացելու նպատակով Վարդանը տարիներ առաջ գնեց նոր տուն, սակայն նրան այդպես էլ չհաջողվեց սեփական ուժերով վերանորոգել այն:

Վարդանն ասում է. *«Մենք այնքան չէինք վաստակում ընտանիքի ծախսերը հոգալու և միաժամանակ տան վերանորոգման նպատակով խնայողություններ անելու համար: Հաբիթաթի հետ համագործակցությունն ինձ ապահովության զգացում տվեց: Ես, իսկապես, շատ տպավորված եմ Հաբիթաթ Արմենիայի աշխատանքով: Դու ստանում ես աջակցություն և տալիս այն մարդկանց, որոնք դրա կարիքն ունեն»:*

Ընտանիքը շատ հուզված և ոգևորված է կամավորական ծրագրով և անչափ ուրախ էր հյուրընկալել Կոկա-Կոլա Հելլենիկ ընկերության անձնակազմին իրենց տանը Հաբիթաթ Արմենիայի մեկօրյա ծրագրի շրջանակներում:

ԳԼՈՒԽ 3

ՀԵՏԵՎՈՂԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԳԼՈԲԱԼ ՊԱՀԱՆՋՆԵՐԻՆ

ՀՖՀ Արմենիան լավագույնս կառավարում է այն բոլոր ֆոնդերը, որոնք տրամադրվում են բնակարանային աղքատությունը վերացնելու առաքելության համար: Ֆոնդերն արդյունավետ կառավարելու հանգամանքը ՀՖՀ Արմենիային թույլ է տալիս աջակցել Հայաստանում առավել մեծ թվով ընտանիքների և համայնքների:

Հասույթ

ՀՖՀ Արմենիան շահույթ չհետապնդող հիմադրամ է, որին աջակցում են ՀՖՀ Արմենիայի գործունեությանը նվիրված մարդիկ: Աջակցությունը տրամադրվում է անհատների, կորպորացիաների, հիմադրամների, ՀՖՀ այլ գրասենյակների և այլ կազմակերպությունների կողմից ֆինանսական կամ այլ հատկացումների միջոցով:

2013 ֆինանսական տարում ընդհանուր եկամուտը կազմել է 126.4 մլն ՀՀ դրամ (308 147 ԱՄՆ դոլար). 2013 ֆինանսական տարում ՀՖՀ Արմենիան աջակցություն է ստացել նաև Վանաձորի քաղաքապետարանից:

Ծախսեր

ՀՖՀ Արմենիա Հիմադրամն իր ծախսերը դասակարգում է հետևյալ երեք հիմական ուղղություններով.

- ծրագրային
- ռեսուրսների զարգացման և միջոցների հայթայթման
- կառավարման/ընդհանուր ծախսեր

2013 ֆինանսական տարում ընդհանուր ծախսերը կազմել են 130 մլն դրամ (316 427 ԱՄՆ դոլար):

Ծրագրային ծախսեր

2013 ֆինանսական տարում ՀՖՀ Արմենիայի ծրագրային ծախսերը կազմել են 84 մլն դրամ (205 091 ԱՄՆ դոլար), որը կազմում է ընդհանուր ծախսերի 65%–ը:

Ռեսուրսների զարգացման և միջոցների հայթայթման համար ծախսեր

2013 ֆինանսական տարում ռեսուրսների զարգացման և միջոցների հայթայթման ծախսերը կազմել են 14,7 մլն դրամ (35 798 ԱՄՆ դոլար), որը ընդհանուր ծախսերի 11% էր: Ռեսուրսների զարգացման և միջոցների հայթայթման հիմական ծրագրերը ներառում են ուղղակի նամակագրությունն ու անմիջական կապը հիմական նվիրատուների, անհատ նվիրատուների, տասանորդային նվիրատվություն կատարող ՀՖՀ գործընկեր մասնաճյուղերի, հիմադրամների և կորպորացիաների, հայկական սփյուռքի և այլոց հետ:

Կառավարման և ընդհանուր ծախսեր

2013 ֆինանսական տարում կառավարման և ընդհանուր ծախսերը կազմել են 28 մլն դրամ (68 684 ԱՄՆ դոլար), որը ընդհանուր ծախսերի 22% է: Այս ծախսերը ներառում են անձնակազմի վարձատրությունը (բացի ծրագրային և ռեսուրսների զարգացման և միջոցների հայթայթման հարցերով անձնակազմի), կոմունալ ծախսեր, գրասենյակի վարձակալություն և սպասարկում, և ՀՖՀ Արմենիայի ամենօրյա աշխատանքներին առնչվող այլ ծախսեր:

Տարեկան աուդիտ

ՀՖՀ Արմենիայի ֆինանսական հաշվետվությունները ենթակա են ամենամյա անկախ աուդիտի: ՀՖՀ Արմենիայի ֆինանսական հաշվետվությունների աուդիտը երեք տարի (2009–2011թթ.) անընդմեջ իրականացրել է «Գրանթ Թորնթոն» ՓԲԸ–ն: 2012թ. ֆինանսական հաշվետվության աուդիտը իրականացրել է «Բի-Դի-Օ Արմենիա» ՓԲԸ–ն: ՀՖՀ Արմենիան մշտապես ստացել է դրական (չձևափոխված) աուդիտորական եզրակացություն:

	ՖՏ2013 1 ԱՄՆ դոլար= 410.38 ՀՀ դրամ		ՖՏ2012 1 ԱՄՆ դոլար= 384.54 ՀՀ դրամ	
Ակտիվներ				
	ՀՀ դրամ	ԱՄՆ դոլար	ՀՀ դրամ	ԱՄՆ դոլար
Կանխիկ միջոցներ և դրանց համարժեքներ	60,805,095	148,168	144,565,300	375,944
Ներդրումներ	604,745,731	1,473,624	548,701,811	1,426,904
Դեբիտորական պարտքեր և կանխավճարներ	4,753,148	11,582	4,093,226	10,644
Այլ ակտիվներ	1,109,712	2,704	949,278	2,469
Ակտիվներ, ընդամենը	**671,413,686**	**1,636,078**	**698,309,615**	**1,815,961**
Պարտավորություններ և զուտ ակտիվներ				
Պարտավորություններ, ընդամենը	415,172,274	1,011,678	438,670,320	1,140,766
Զուտ ակտիվներ	256,241,412	624,400	259,639,295	675,195
Ընդամենը պարտավորություններ և զուտ ակտիվներ	**671,413,686**	**1,636,078**	**698,309,615**	**1,815,961**

Զուտ ակտիվների փոփոխության մասին հաշվետվություն

	ՖՏ2013 1 ԱՄՆ դոլար= 410.38 ՀՀ դրամ		ՖՏ2012 1 ԱՄՆ դոլար= 384.54 ՀՀ դրամ	
Հասույթ				
ՀՖՀԻ–ի կողմից կանխիկ փոխանցում	71,100,900	173,257	86,582,376	225,158
Գլոբալ վիլիջ ծրագրի շրջանակներում կատարված նվիրատվություններ	10,305,088	25,111	27,946,171	72,674
Տոկոսավճարներից ստացված եկամուտ	45,024,218	109,713	52,000,888	135,229
Տեղական նվիրատվություններ	27,200	66	7,330,497	19,063
Եկամուտներ, ընդամենը	**126,457,406**	**308,147**	**173,859,932**	**452,124**
Ծախսեր				
Ծրագրային	84,165,133	205,091	103,197,767	268,367
Կառավարում և ընդհանուր	28,186,422	68,684	26,830,513	69,773
Ռեսուրսների զարգացում	14,690,966	35,798	10,223,725	26,587
Այլ	2,812,768	6,854	-10,253,656	-26,665
Ծախսեր, ընդամենը	**129,855,289**	**316,427**	**129,998,349**	**338,062**
Զուտ ակտիվներում փոփոխությունը	**- 3,397,883**	**- 8,280**	**43,861,583**	**114,062**
Զուտ ակտիվները տարվա սկզբում	**259,639,295**	**632,680**	**215,777,712**	**561,132**
Զուտ ակտիվները տարվա վերջում	**256,241,412**	**624,400**	**259,639,295**	**675,195**

2013 ֆինանսական տարվա միջոցների աղբյուրները

	ՀՀ դրամ	ԱՄՆ դոլար	%
ՀՖՀԻ–ի կողմից փոխանցում	71 մլն	173,257	56
Գլոբալ վիլիջ ծրագրի շրջանակներում կատարված նվիրատվություններ	10 մլն	25,111	8
Տոկոսավճարներից ստացված եկամուտ	45 մլն	109,713	36
Տեղական նվիրատվություն	0 մլն	66	0
Եկամուտներ և այլ մուտքեր, ընդամենը	**126** մլն	**308,147**	**100**



2013 ֆինանսական տարվա միջոցների օգտագործում

	ՀՀ դրամ	ԱՄՆ դոլար	%
Ծրագրային	84 մլն	205,091	65
Կառավարում և ընդհանուր	28 մլն	68,684	22
Ռեսուրսների զարգացում	14,7 մլն	35,798	11
Այլ	2,8 մլն	6,854	2
Ծախսեր, ընդամենը	**130** մլն	**316,427**	**100**



ՀՖՀ Արմենիայի առաքելությունն է Հայաստանում վերացնել բնակարանային անբավարար պայմանները, որն անհնար է առանց մեծահոգի նվիրատվությունների և աջակցության: Մենք գնահատում ենք յուրաքանչյուր նվիրատուին: Շնորհակալություն:

ՆՎԻՐԱՏՈՒՆԵՐ, ՈՐՈՆՔ ԱՋԱԿՑԵԼ ԵՆ ՀՖՀ ԱՐՄԵՆԻԱՅԻՆ 2013 ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՏԱՐՈՒՄ

ԱՆՀԱՏ ՆՎԻՐԱՏՈՒՆԵՐ

Մեթյու Հագոբյան
Գրեգ Աբքարյան
Հարություն և Նադյա Վափորչյան
Մարգարիտ Ուոլշ
Թոմաս Նուն
Հայգ Սեֆերյան
Դանքըն Սքոթ
Ջորջ և Իրմա Փափազյան
Գիլբերթ Մենա
Պրն և տկն Դեվիդ Պէրպէրյան
Դեյվիթ և Նաիրի Քոլելլո
Պրն և տկն Արծոն Շեքոյան
Լեոն Փալյան
Հիլդա Քրիքորյան
Դոնալդ Հասչին
Ջուդիթ Ա. Պորտա
Էլիզաբեթ Քինոսյան
Տկն Մերի Օհանեսյան–Բեթի
Ֆիլիս Վուդ
Բարբարա Քեշիշյան
Ռոբերտ Մանսելյան
Քրիստըլ Գուռուզյան
Նիկոլ Թոմաս
Ջանեթ Լիպարի
Անդրեյ և Ջուլիեթ Բելկին
Ռինա Չանչանյան
Ռոննի Հենեսյան
Թըրիշա Ստեֆանյան
Մարիա Պետրենկո
Ջեյն Ուիլիամս
Ջոնաթան Գուդ
Սյուզան Աբելյան
Հենրի և Քոննի Օհանյան
Արմինե Պապուչյան
Բարրի Պոզներ
Դեյվիդ Դի Լորենզո
Թինա Շահաբյան

ԳԼՈՒԽ 4

ՆՎԻՐԱՏՈՒՆԵՐԻ ՄԵԾԱՀՈԳՈՒԹՅՈՒՆԸ

Գլոբալ վիլիջ ծրագրի կամավորներ

Էն Բայնս
Յան Բրովերման
Ջեյն Էդվարդս
Էյմի Գրամբո
Ջես Կուկլակիս
Էլիզաբեթ Մարիեթ
Ալեքսանդր Մնացականով
Մարիա Պետրենկո
Նիկոլ Թոմաս
Ռեյչըլ Բենեթ
Հելգա Կլասեն
Եվա դե Յոնգ
Ռենե դե Յոնգ
Երիկ Հարբեր
Մերի Հարբեր
Ռոզալին Հարբեր
Քրիստոֆեր Պետերկա
Թեմմի Փեթերսոն
Սոնյա Մաքֆարկլին
Ջոն Հոու
Միշել Վանդեռվորթ
Շտեֆան Բաու
Ջոն ՄաքԴաուել
Գյուրջիթ Ֆլորա
Պատրիցիա Հիրշ
Կարոլ Դրադջ
Քեննեթ Դրադջ
Մերիոն Անդերսեն
Ռիչարդ Փենն
Մարգարիտա Դավիդովա
Բրիթանի Էլդեր
Շելի Ֆլենըգըն
Սառա Մաքկի
Լիսա ՄաքՆիլ
Ամանդա Մորան
Քելսի Սմիթ
Արա Բելյան
Հիթեր Հաննա
Անգուս Բեք
Ռութ Էգնյու
Էլլեն Անդերսոն
Մորա Քուին
Բեթ Ֆերլի
Ջոնաթան Էրսկին
Ֆիոն Փրայս
Քեթի Հյուզ
Էմմա Մուր
Մորգան Շոու
Աբը Ֆարքուհարսոն
Դանիել Փարկես
Ռայան Բեք
Էննի Դաֆֆի

ՀԱԲԻԹԱԹԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂ ԳՐԱՍԵՆՅԱԿՆԵՐ, ՈՐՈՆՔ ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅՈՒՆ ԵՆ ԿԱՏԱՐԵԼ

Հաբիթաթ ֆոր Հյումենիթի Գրեթեր Սինսինաթի
Հաբիթաթ ֆոր Հյումենիթի Կանադա
Հաբիթաթ ֆոր Հյումենիթի Փեթերսըն
Հաբիթաթ ֆոր Հյումենիթի Օկլընդ Քաունթի
Հաբիթաթ ֆոր Հյումենիթի Օրինջ Քաունթի
Հաբիթաթ ֆոր Հյումենիթի Դելվեր Քաունթի
Հաբիթաթ ֆոր Հյումենիթի Բերգընն Քաունթի
Հաբիթաթ ֆոր Հյումենիթի Քենթ Քաունթի
Հաբիթաթ ֆոր Հյումենիթի Գրեթըր Ինգհամ Քաունթի
Հաբիթաթ ֆոր Հյումենիթի Վեսթմինսթրի քոլեջ
Հաբիթաթ ֆոր Հյումենիթի Միչիգան
Հաբիթաթ ֆոր Հյումենիթի Օմահա
Հաբիթաթ ֆոր Հյումենիթի Մորիս

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐ (կորպորատիվ, եկեղեցիներ, հիմնադրամներ, և այլն)

Թրայվենթ Ֆայնանշլ ֆոր Լութերանս
Արա և Եդմա Դումանյան հիմնադրամ
Հայ բողոքական եկեղեցի Միչիգանում
Սբ. Էնդրյու հայկական եկեղեցի
Բլումբերգ ընկերություն
Հայ եկեղեցու նվիրատվության ֆոնդ
Քասթըմ Փրոբիոթիքս
Նավիսքենթ
«Կոկա-Կոլա Հելլենիկ Բոթլինգ Քամփնի Արմենիա» ընկերությունը

ՀՖՀ Արմենիայի ՀՈԳԱԲԱՐՁՈՒՆԵՐԻ ԽՈՐՀՈՒՐԴ և ՀՖՀ Արմենիայի Թիմ

ՀՖՀ ԱՐՄԵՆԻԱՅԻ ՀՈԳԱԲԱՐՁՈՒՆԵՐԻ ԽՈՐՀՈՒՐԴ

Գրեգ Ֆոսթեր՝ Հոգաբարձուների խորհրդի նախագահ
Փոխնախագահ, ՀՖՀԻ Եվրոպայի, Մերձավոր Արևելքի և Աֆրիկայի տարածաշրջանային գրասենյակ

Լուցիա Պոպովսկա՝ Խորհրդի անդամ
Ծրագրերի տնօրեն, ՀՖՀԻ Եվրոպայի, Մերձավոր Արևելքի և Աֆրիկայի տարածաշրջանային գրասենյակ

Քոնոր Հանան՝ Խորհրդի անդամ
Ծրագրերի զարգացման ղեկավար, ՀՖՀԻ Եվրոպայի, Մերձավոր Արևելքի և Աֆրիկայի տարածաշրջանային գրասենյակ

ՀՖՀ Արմենիայի Թիմ

Լուիզա Վարդանյան
Գործադիր տնօրեն

Կարինե Մաիլյան
Ծրագրերի տնօրեն

Աննա Փարաղյան
Ֆինանսների և ադմինիստրատիվ հարցերով ղեկավար

Սեդա Արզումանյան
Ռեսուրսների զարգացման ղեկավար

Անդրե Օհանյան
Շինարարության և աղետների արձագանքման ղեկավար

Կարեն Ասատրյան
ԲԲՇԷԱԲ ծրագրի ղեկավար

Աննա Մաթևոսյան
Ծրագրերի պատասխանատու

Նաիրա Աբրահամյան
Գլոբալ վիլիջի և հանրության հետ կապերի համակարգող

Աննա Հովակիմյան
Ադմինիստրատիվ օգնական

ԶԱՐԳԱՑՈՂ ԴԻՆԱՄԻԿԱՆ

2001-2013 թթ. ֆինանսական տարիների ընթացքում
օժանդակություն ստացած ընտանիքների թվային կորը



Հավելված 1

ԱԿԹ	Աղետների կառավարման թիմ
ԱՄՆ ՄԶԳ	Ամերիկայի Միացյալ Նահանգների Միջազգային զարգացման գործակալություն
ԱՌՆԱ	Աղետների ռիսկերի նվազեցում և արձագանքում
ԲԲՇԷԱԲ	Բազմաբնակարան շենքերի էներգաարդյունավետության բարձրացում
ԲՈԱԾ	Բնակարանային ոլորտում աջակից ծառայություններ
ԵՀԹ	Երկրի հումանիտար թիմ
ԷԱ	Էներգաարդյունավետություն
ՀՖՀ Արմենիա	Հաբիթաթ ֆոր Հյումենիթի Արմենիա
ՀՖՀԻ	Հաբիթաթ ֆոր Հյումենիթի Ինթերնեյշնլ
ՄԱԿԶԾ	Միավորված ազգերի կազմակերպության Զարգացման ծրագիր
ՄՖՀ	Միկրոֆինանսական հաստատություն
ՇՏԱ	Շինարարության տեխնիկական աջակցություն
ՍՊԸ	Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն
ՈՒՎԿ	Ունիվերսալ վարկային կազմակերպություն
ՓԲԸ	Փակ բաժնետիրական ընկերություն
ՖՄԿՈՒ	Ֆինանսական միջոցների կառավարման ուսուցում
ՖՀ	Ֆինանսական հաստատություն
ՖՏ	Ֆինանսական տարի

ԱՋԱԿՑԵՔ ՄԵԶ՝ ԿԱՌՈՒՑԵԼՈՒ ՏՆԵՐ, ՀԱՄԱՅՆՔՆԵՐ ԵՎ ՀՈՒՅՍ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Նախորդ տարում, գործընկերներից և բարեկամներից ստացված օժանդակության շնորհիվ ՀՖՀ Արմենիան կարողացավ ծառայել ավելի քան 1,451 հայաստանաբնակ ընտանիքների, որոնք իրենց բնակարանային պայմանները բարելավելու խիստ կարիք ունեին: Ավելի մեծ թվով ընտանիքների օժանդակելու համար ՀՖՀ Արմենիան իր բարեկամների օգնության կարիքն ունի: Մենք հավատում ենք, որ միասին կկարողանանք աջակցել 2014 ֆինանսական տարվա համար թիրախ ընտրված ավելի քան 1,300 ընտանիքների:

Մենք համոզված ենք ու աղոթում ենք, որ դուք ցանկություն ունենաք աջակցել մեր ծրագրին և կկատարեք ձեր նվիրատվությունը: Ձեր օգնությամբ մենք երեխային կապահովենք քնելու տաքուկ անկյունով, ընտանիքին կապահովենք խոհանոցով, որտեղ նրանք կկարողանան ընթրիք պատրաստել, կամ հնարավորություն կընձեռենք պատշաճ լոգարան ունենալ: Նվիրաբերեք այսօր:

Օգնեք հայ ընտանիքներին փոխել իրենց կյանքը.

Նվիրատվության տարբերակներ.

- Կատարեք մինչև 1 000 ԱՄՆ դոլար նվիրատվություն, որը կուղղվի տան որևէ հատվածի վերանորոգմանը՝ սանհանգույց, խոհանոց, հյուրասենյակ և այլն
- Աջակցեք 1 ընտանիքի՝ նվիրաբերելով 3,000 ԱՄՆ դոլար
- Աջակցեք 2 ընտանիքների՝ նվիրաբերելով 6,000 ԱՄՆ դոլար
- Աջակցեք 10 ընտանիքների՝ 30,000 ԱՄՆ դոլար

Առցանց՝

ԱՄՆ դոլար՝ www.habitat.org/donate/armenia
Եվրո՝ www.habitatforhumanity.org.uk/donate/armenia

Բանկային փոխանցում՝

Հաբիթաթ ֆոր Հյումենիթի Արմենիա հիմնադրամ, HSBC Բանկ Հայաստան
ՀՀ՝ 001 - 174 127 - 001